



## ՄԱՐԴՈՒԿ-ՋԱՐԴՈՒԿԸ

*Ըստ Էռնստ Հոֆմանի*



ար-չկար, Դրոսսելմայեր անունով մի ծերունի կար: Դրոսսելմայերը մի գաղտնիք ուներ: Երիտասարդ ժամանակ նա թագավորական արքունիքի ամենահմուտ և ճարտար վարպետն էր եղել: Նա բազմաթիվ հրաշք ժամացույցներ էր պատրաստել: Որոշները հարյուր զրնգուն զանգեր ունեին: Մյուսները գաղտնի դռներ ունեին, որոնց միջից ներս ու դուրս էին անում փոքրիկ թռչուններ և ազդարարում ժամերը: Իսկ մյուսները զարդարված էին փոքրիկ երգող երաժիշտներով: Պալատում բոլորը միայն վարպետ Դրոսսելմայերի ժամացույցների մասին էին խոսում, բայց նրա գլուխգործոցը թակարդն էր:

Վարպետ Դրոսսելմայերը մի այնպիսի հիասքանչ թակարդ էր ստեղծել, որն օրական հարյուրավոր մկներ էր բռնում: Պալատի բոլոր բնակիչները շատ գոհ էին այդ թակարդից, բացի, իհարկե, մկների թագավորից: Մկների թագավորն ապրում էր պալատում՝ իր հպատակների հետ: Թակարդի պատճառով նա ստիպված էր եղել լքել պալատն ու նոր բնակության վայր փնտրել, և դա նրան սարսափելի զայրացրել էր: Մկների թագավորը կախարդանքի էր տիրապետում և վրեժ լուծեց վարպետ Դրոսսելմայերից՝ նրա եղբորորդուն փայտե տգեղ տիկնիկ դարձնելով:

Տիկնիկի հագին զինվորական համազգեստ կար, նրա





գլխին մի ծաղրական թագ  
կար նկարված, ասես արքայազն լիներ, և  
նրա ծնոտներն այնպես էին բացվում ու փակվում,  
որ նա կարող էր ատամներով կաղին ջարդել:

Այդ պատճառով նրան Մարդուկ-Ջարդուկ էին անվանում:  
Մկների թագավորի կախարդանքը շատ զորեղ էր: Այն վերաց-  
նելու միայն մեկ ձև կար. նախ՝ Մարդուկ-Ջարդուկը ինչ-  
որ կերպ պետք է սպաներ մկների չար թագավորին, հետո՝  
ինչ-որ փոքրիկ աղջիկ պետք է սիրեր նրան՝ չնայած նրա  
տգեղությանը: Բայց վարպետ Դրոսսելմայերը չգիտեր, թե ուր  
է գնացել մկների թագավորը, և չէր ձանաչում այնպիսի բարի  
աղջկա, ով կսիրեր տգեղ փայտե տիկնիկին, ուստի նրա խեղճ  
եղբորորդին մնում էր կախարդված Մարդուկ-Ջարդուկ:

Վարպետ Դրոսսելմայերն այնպես էր վշտացել ու հուսա-  
հատվել, որ դադարեց ժամագործությամբ զբաղվել: Ուստի նա  
շուտով կորցրեց իր աշխատանքը: Վարպետ Դրոսսելմայերն  
իրեն էր մեղավոր համարում իր եղբորորդու հետ պատահած  
սարսափելի դժբախտության համար: Նա ոչ մեկին ոչ մի բան  
չէր ասել այդ ամենի մասին, բայց առավոտից իրիկուն մտածում  
էր, թե ոնց վերջ դնի մկների չար թագավորի կախարդանքին:  
Եվ ի վերջո նա մի փայլուն միտք հղացավ:

Վարպետ Դրոսսելմայերը մի սանուհի ուներ՝ Կլարան, ով



շատ բարի ու գեղեցիկ աղջիկ էր: Վարպետ Դրոսսելմայերը կարծում էր, որ միայն Կլարան կարող էր սիրել տգեղ դեմքով Մարդուկ-Ջարդուկին:

Սուրբ ծննդյան նախօրեին վարպետ Դրոսսելմայերը հուզմունքից թրթռացող ձայնով թակեց Կլարայենց տան դուռը: Նրա հուզմունքը կապ չունեի ո՛չ տոնական խնջույքի,

ո՛չ երաժշտության, ո՛չ էլ խաղի ու պարի հետ:



Ո՛չ, այս ամենը վարպետ Դրոսսելմայերին

չէր հետաքրքրում: Նա այստեղ եկել

էր չար կախարդանքը խափանելու

և իր սիրելի եղբորորդուն փրկելու

հույսով: Մինչ խնջույքի հյուրերը

ուրախ զրուցում ու կատակում էին,

վարպետ Դրոսսելմայերը դատարկեց

իր մեծ պայուսակը, որը լի էր Մկների

թագավորի սիրած տեսակ-տեսակ

քաղցրավենիքով, և կոնֆետներն ու ընկու-

զեղենը շարեց տան տարբեր անկյուններում:

«Սրանք նրան դուրս կբերեն իր թաքստոցից, որտեղ էլ որ այն լինի», — մտածեց վարպետ Դրոսսելմայերը:

Շուտով եկավ սուրբ ծննդյան նվերը Կլարային հանձնելու ժամանակը: Փոքրիկ աղջիկը երջանկությունից փայլող աչքերով արագ-արագ բացեց նվերի տուփը, բայց երբ տեսավ տգեղ Մարդուկ-Ջարդուկին, նրա աչքերի փայլը միանգամից մարեց: Բայց հետո աղջիկը քնքշորեն շոյեց Մարդուկ-Ջարդուկին: Նա ո՛չ գեղեցիկ էր, ո՛չ էլ նույնիսկ նոր, և հենց դրա համար էլ Կլարան սկսեց սիրել նրան: Նա չէր կարող թույլ տալ, որ Մարդուկ-Ջարդուկը մնա միայնակ, որ նրան ծաղրեն ու չսիրեն, հատկապես Սուրբ ծննդյան տոներին: Կլարան գրկեց Մարդուկ-Ջարդուկին ու ամուր սեղմեց կրծքին: Այս ամենը տեսնելով՝ վարպետ Դրոսսելմայերը հեռացավ հույսը սրտում:

Երբ խնջույքն ավարտվեց, և բոլոր հյուրերը գնացին, Կլարան



վերցրեց Մարդուկ-Ջարդուկին ու գնաց քնելու: Նա փայտե տիկնիկին պառկեցրեց անկողնում՝ իր կողքին, և շնչաց.

— Ես սիրում եմ քեզ և միշտ կհոգամ քո մասին, դու երբեք մենակ չես լինի:

Այդ գիշեր Կլարան մի շատ տարօրինակ երազ տեսավ: Իբր Մարդուկ-Ջարդուկն արթնացավ, ժպտաց Կլարային, բռնեց նրա ձեռքը և նրան տարավ ցած: Ներքևում՝ հյուրասենյակից, ծվծվոցի ձայն էր գալիս: Նայելով շուրջը՝ Կլարան վախից քարացավ: Սենյակում ամենուր մկներ էին: Նրանք իրար հրմշտում ու կծոտում էին՝ վարպետ Դրոսսելմայերի թողած քաղցրավենիքի համար: Բայց ամենասարսափելին գորգի կենտրոնում կանգնած յոթգլխանի հսկա մուկն էր, որը հրձվում էր՝ տեսնելով այդ խառնաշփոթը: Յոթգլխանի մուկը յուրաքանչյուր գլխի վրա մի ոսկե թագ էր կրում, և Կլարան հասկացավ, որ նա գարշելի մկների չար թագավորն է: Մարդուկ-Ջարդուկը մերկացրեց սուրը, խիզախաբար հարձակվեց Մկների թագավորի վրա և սկսեց հերոսաբար կռվել: Բայց ուժերն անհավասար էին: Մկները տեսան կռիվն ու շտապեցին պաշտպանել իրենց թագավորին: Նրանք հարձակվեցին Մարդուկ-Ջարդուկի վրա ու սկսեցին ամեն կողմից քաշքշել, ճանկոել ու կծոտել նրան: Տեսնելով իր հաղթանակը՝ Մկների թագավորը փքվեց ու սկսեց բարձր-բարձր ծիծաղել: Այդ ժամանակ Կլարան հանեց մաշիկն ու, որքան ուժ ուներ, շարտեց Մկների թագավորի վրա:

Դրըխկ... Մաշիկը հարվածեց Մկների թագավորի յոթ սարսափազդու գլուխներից չորսին: Նա մի պահ օրորվեց, գնաց հետ ու առաջ, հետո տապալվեց գետնին ու սատկեց:

Մկները տեսան իրենց թագավորի մահը թե չէ, սկսեցին





փախչել: Նրանք վերցրին իրենց թագավորի դին և փախան մտան պատերի ու հատակի անցքերը:

Մարդուկ-Ջարդուկը վազեց Կլարայի մոտ, գրկեց ու համբուրեց նրան:

— Շնորհակալություն այն ամենի համար, որ արեցիր հանուն ինձ,— շնջաց Մարդուկ-Ջարդուկը, և նրա աչքերում արցունքներ հայտնվեցին,— խնդրում եմ, թո՛ւյլ տուր վարձահատույց լինեմ՝ քեզ իմ թագավորություն՝ քաղցրավենիքի աշխարհ տանելով:

Դա Կլարայի տեսած ամենահիասքանչ երագն էր: Նա երագում զբոսնեց շոկոլադե անտառում, անցավ լիմոնադե գետը, քաղեց շաքարե ծաղիկներ և այցելեց Մարդուկ-Ջարդուկի թիվածքաբլիթե դոլյակը: Այնտեղ այնքան լավ էր, որ առավոտյան Կլարան չէր ցանկանում արթնանալ, որպեսզի երագը չավարտվեր: Նա ամուր գրկեց փայտե տիկնիկին և ասաց.

— Դու իմ կյանքի ամենալավ նվերն ես:

Մարդուկ-Ջարդուկը Կլարային պատասխանեց պայծառ ժպիտով:

Այդ պահին քաղաքի մյուս ծայրում քնից զարթնեց վարպետ Դրոսսելմայերը և տոնածառի տակ գտավ իր կյանքի ամենալավ նվերը: Այնտեղ հոգնած, բայց խաղաղ քնած էր նորից տղա դարձած իր քաջ ու անուշիկ եղբորորդին:

